«Հաստատում եմ»

ԵՊՀ պրոռեկտոր,

Ռ.Հ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

ԿԱՐԾԻՔ

Անդրանիկ Արարատի Եսայանի՝ «Հյուսիսարեվելյան Հայաստանի Տավուշ և Զակամ գավառները XVII դ. – XVIII դ. առաջին քառորդին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն)» Է.00.01 - «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Հաստատված է ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի 2024 թ. սեպտեմբերի 25 – ի նիստում (արձանագրություն թիվ 2): Նիստին մասնակցում էին Է. Գ. Մինասյանը, Հ. Բ. Գրիգորյանը, Ա. Ն. Հայրունին, Հ. Ժ. Հովհաննիսյանը, Գ. Մ. Բաղալյանը, Վ. Ա. Հակոբյանը, Ք. Ժ. Յախշյանը, Կ. Ա. Եղիազարյանը, Մ. Ա. Մալխասյանը, Տ. Կ. Գևորգյանը, Տ. Հ. Ղանալանյանը և ուրիշներ:

Ուշ միջնադարի ու վաղ արդի շրջանի Հայաստանի ժողովրդագրության պատմության ուսումնասիրությունն ունի ընդգծված արդիական նշանակություն: Եթե այդ ոլորտում կատարվել են ընդհանրական աշխատանքներ, ապա առանձին նահանգների, առավել ևս գավառների, վերաբերյալ հետազոտությունները շատ ավելի սակավ են: Հյուսիսարևելյան Հայաստանի պատմությունը XVII դարում ու XVIII դ. առաջին քառորդին երբևէ չի հանդիսացել առանձին ուսումնասիրության առարկա, ուստի քննարկման ներկայացված աշխատանքն ամբողջությամբ գիտական նորույթ է: Աշխատանքը շարադրված է հնարավոր բոլոր սկզբնաղբյուրների օգտագործմամբ ու համակողմանի պատկերացում է տալիս քննվող խնդիրների վերաբերյալ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից: Ընդհանուր ծավալը 130 էջ է:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ ներկայացված է թեմայի **արդիականությունը.** Ատենախոսն իրավացիորեն նշում է, որ նշյալ ժամանակաշրջանի պատմական իրադարձություններն ու ժողովրդագրական տեղաշարժերն իրենց ազդեցությամբ ու հետևանքներով սերտորեն կապված են նորագույն շրջանի մի շարք կարևոր իրողությունների հետ:

Ատենախոսության **գիտական նորույթը**՝ գնահատելի է մի քանի առումներով. հեղինակը կարողանում է պարզել թե՝

ա) ինչպիսի՞ն էին պարսկա-օսմանյան պատերազմների հետևանքները Տավուշ և Զակամ գավառներում,

բ. պարսկա-օսմանյան խաղաղության տևական շրջանն ինչպիսի՞ դրական ազդեցություն ունեցավ տարածաշրջանում և ո՞րոնք էին այն նպաստավոր գործոնները, որոնցով պայմանավորված այդ գավառներում հոգևոր-մշակութային ու տնտեսական կյանքը վերելք ապրեցին ու ձևավորվեցին հայկական մելիքություններ,

գ. Սեֆյանների օրոք XVI–XVII դդ. ի՞նչ նոր ցեղեր հայտնվեցին այդ գավառներում և ինչպե՞ս փոխեցին դրանց էթնիկ դիմագիծը,

դ. XVIII դարասկզբին Իրանի թուլացմամբ պայմանավորված լեզգիների արշավանքները, ապա դրանց հաջորդած թուրքական նվաճումն ինչպե՞ս անդրադարձան Տավուշ և Զակամ գավառների վրա,

ե. ինչպիսին էր Տավուշ և Զակամ գավառների էթնո-տնտեսական պատկերն ըստ օսմանյան 1727 թ. «Գանձակ-Ղարաբաղի էյալեթի ընդարձակ դաֆթար»-ի: Ո՞րոնք էին հայ բնակչության զբաղեցրած տարածքները և ի՞նչ քոչվոր ցեղեր էին հայտնվել այդ գավառներում:

Ատենախոսության մեջ առաջին անգամ շրջանառության մեջ են դրվել դեռևս չհրատարակված հայալեզու և այլալզու սկզբնաղբյուրներ: Հատկապես արժեքավոր են օսմանյան վավերագրերը, որոնք հնարավորություն են տալիս նոր լույսի ներքո լուսաբանել նշված գավառներում քննվող ժամանակաշրջանի պատմաժողովրդագրական գործընթացները:

Առաջին գլխում, որը վերնագրված է «Իրավիճակը Հյուսիսարեվելյան Հայաստանում XVI դ. վերջին XVII դ. սկզբներին», Ա. Եսայանն անդրադառնում է XVI դ. պարսկա-թուրքական ռազմական գործողություններին և դրանց ազդեցությանը հյուսիսարևելյան Հայաստանի գավառների վրա: Ապա հանգամանքորեն խոսվում է Շահ Աբասի բռնագաղթի ունեցած ազդեցության մասին Տավուշի և Զակամի գավառներում: Բերելով հիմնավոր փաստարկներ՝ նա հանգում է եզրակացության, որ կրելով ռազմական գործողությունների ծանրությունները, այնուամենայնիվ հյուսիսարևելյան Հայաստանի գավառները մեծամասամբ զերծ են մնացել շահաբասյան բռնագաղթից: Առաջին գլխի երրորդ ենթագլխում ներկայացվում են հյուսիսարևելյան Հայաստանում Սեֆյանների օրոք հաստատված ցեղերն ու դրանց տեղաբաշխվածությունը:

Երկրորդ գլուխը վերնագրված է «Տավուշ և Զակամ գավառները (1606-1725)»: Այստեղ Ա. Եսայանը ներկայացնում է Տավուշի և Զակամի մելիքությունները (1606–1725): Սա չափազանց արժեքավոր գիտական խոսք է հայագիտության մեջ: Հեղինակը կարողանում է պարզել հյուսիսարևելյան Հայաստանում գոյություն ունեցած, թեկուզ փոքր ու թույլ, սակայն քաղաքական միավորների գոյության հանգամանքը, որը մինչ այդ անհայտ էր հայ պատմագիտության համար:

Հաջորդիվ համակողմանիորեն ներկայացված են տարածաշրջանում ռազմաքաղաքական վերադասավորումները XVII դ. վերջին - XVIII դ. սկզբին ու դրա ազդեցությունը հյուսիսարևելյան Հայաստանում: Այնուհետև Ա. Եսայանն անդրադառնում է թուրքական ներխուժմանը Հարավային Կովկաս ու դրա հետևանքներին Տավուշ և Զակամ գավառներում:

Երրորդ գլուխը կրում է «Տավուշ և Զակամ գավառների ժողովրդագրական ու տնտեսական պատկերն ըստ օսմանյան 1727 թ. «Գանձակ-Ղարաբաղի էյալեթի ընդարձակ դաֆթար»-ի» վերնագիրը: Այն բաժանված է տասնմեկ ենթագլուխների: Նախ մանրամասն վերլուծվում է այդ դաֆթարը որպես սկզբնաղբյուր, այնուհետև անդրադարձ կատարվում Տավուշ և Զակամ գավառները կազմող Թավուս, Ախնջի, Հասանսու, Ասրիկ, Թուրգանլար, Վերին Զակամ և Ներքին Զակամ նահիյեների բնակչությանն ու վճարված հարկերին: Նշվում է, որ Տավուշ և Զակամ գավառները կազմող նշված 7 նահիյեներում կար 129 բնակավայր: Սրանց մեծամասնությունը՝ 72

գյուղ դատարկ ու լքված էին: Մնացած 57 գյուղերից 33-ը ունեին հայկական բնակչություն, իսկ 24-ը՝ մահմեդական:

Չորրորդ գլուխն ունի «Հոգեվոր-մշակութային կյանքը Զակամ և Տավուշ գավառներում XVII դ. – XVIII դ. առաջին քառորդին» անվանումը: Այստեղ խոսվում է այդ գավառներում հոգևոր մշակութային կյանքի աշխուժացման մասին: Քննության է առնվում ձեռագրական ժառանգությունը, ինչպես նաև եկեղեցաշինությունը:

Եզրակացություններում հեղինակն ամփոփ կերպով ներկայացնում է իր հետազոտության հիմնական արդյունքները:

Անկասկած, կատարվել է դրական ու գնահատելի մեծածավալ աշխատանք, սակայն միևնույն ժամանակ ատենախոսությունում նկատելի են նաև ոչ էական առանձին թերություններ, որոնցից կարելի է նշել.

1. Տերմիններին վերաբերող խնդիրներ. «Գանձակ-Ղարաբաղի էյալեթի ընդարձակ դաֆթար»-ի» վերնագրում «Գենջե-Քարաբաղ» տեղանուններից մեկի դեպքում օգտագործվում է հայկական տարբերակը, իսկ մյուսը թողնված է օտարահունչ ձևով: Ավելի ճիշտ կլիներ պահպանել միակերպություն՝ կամ երկուսն էլ ներկայացնել հայկական կա՛մ բնօրինակի, ժամանակին պաշտոնապես կիրառված տարբերակներով: Օսմանյան Թուրքիայի փոխարեն ավելի ճիշտ կլիներ գրել Օսմանյան կայսրություն:
2. Ատենախոսության երրորդ գլխում զետեղված հարկատուների անվանացանկերը կարելի էր տեղադրել առանձին հավելվածով:
3. Աշխատանքում առկա են որոշ արժեքավոր եզրակացություններ, որոնցով կարելի էր համալրել եզրակացությունների բաժինը:

Ամբիոնը գտնում է, որ Ա. Եսայանը կատարել է լուրջ և գնահատելի աշխատանք, ամբողջովին լուսաբանելով հյուսիսարևելյան Հայաստանի պատմությունը XVII դարում ու XVIII դ. առաջին քառորդին: Իր ընդհանրացումները նա ի մի է բերել «**Եզրակացություններում**»՝ բյուրեղացված տեսքով:

Որոշեցին -ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնը, ելնելով վերոհիշյալից, գտնում է.

ա) Անդրանիկ Արարատի Եսայանի « Հյուսիսարեվելյան Հայաստանի Տավուշ և Զակամ գավառները XVII դ. – XVIII դ. առաջին քառորդին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն)» վերտառությամբ ատենախոսությունը հաջողված, պատմագիտական մեծ արժեք ունեցող ուսումնասիրությունն է, որն օգնում է ամբողջական պատկերացում կազմել հյուսիսարեվելյան Հայաստանի Տավուշ և Զակամ գավառները (XVII դ. – XVIII դ. առաջին քառորդ) պատմության մասին:

բ) Ատենախոսությունը լիովին բավարարում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջները և հեղինակն էլ արժանի է իր հայցած Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ԵՊՀ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲՄԻՈՆԻ ՎԱՐԻՉ,
Պ.Գ.Դ., ՊՐՈՖԵՍՈՐ՝ **Է. Գ. ՄԻՆԱՍՅԱՆ**

Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Է. Գ. Մինասյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏԱՐԴԱՐ **Մ. Վ. Հովհաննիսյան**

30.09.2024